

մաթիւ հրաշքներ Յիսուսի խաչելութեան ժամանակ, մանաւանդ երբ տէգով խոցեց մեր Փրկչին կողք, անոր սոսկալի արիւնէն շիթ մը կաթեց այն աչքին՝ որ կոյր էր եւ ինքն ալ միաչէն. երբ մարմնոյ աչքերը լուսաւորուեցան, իր հոգիին աչքն ալ բացուեցաւ եւ հրէութենէ դարձաւ, նոյն այրին մէջ գալով լացաւ եւ ապաշխարեց, և որ յետոյ քրիստոնէական հաւատքին համար վկայ և մարտիրոս հանդիսացաւ: Այս մատու- ուր հապէշաց ազգին կը վերաբերէր, այժմ յոյներուն ձեռքն է (Հան. էջ 190):

#### Ծ. ՀԱՆԴԵՐՁԻՑ ԲԱԺԱՆՄԱՆ ԽՈՐԱՆ

Ղունկիանոսի խորանէն քսան երեք ոտնաչափ հեռի է Հանդերձից բաժանման խորանը. այս երկու խո- րաններու միջեւ կար կամարակապ դուռ մը, ուր կ'ելլուի չորս աստիճաններով, ասիկա Ս. Յարութեան դուռն էր(\*), բայց այժմ յունաց վերաբերեալ սենեակ մ'է: Այս դրան և հայոց Հանդերձից բաժանման խո- րանին միջեւ կը գտնուի գեղեցիկ սիւն մը (Արժ. էջ 83). ասոր մօտ էր որ խաչելութենէն յետոյ, զինուոր- ները Քրիստոսի հանդերձները առնելով չորս բաժին ըրին, իսկ պատմուճանը որ առանց կարանի էր և վե- րէն վար հիւսուած, վիճակ ձգեցին, որու որ ելնէ, որպէսզի չպատուուի (Մասք. Իէ. 35-36, Մարկ. Ժե. 24, Ղուկ. ԻԳ. 34, Յովն. ԺԹ. 23-24): Ըստ աւան- ղութեան, այս տեղ կը գտնուէր սալաքար մը որուն վրայ վիճակ կատարեցին, բայց այժմ այդ քարը վերցուած է, հոն չի գտնուիր, և հոն շինուած է կա-

(\*) Ս. Յարութեան դուռներէն մին (Հան. էջ 190):